

ՎԱՐՊԵՏԻ՝ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԵՐԻ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(1956 թ. հունիսի 23-ին)

Հայ ժողովրդի համար, հավատացյալ հայության համար ամենամեծ, ամենապանծալի, հանդիսավոր օր է:

Այսօր լրանում է մեր ազգային գոյության ամենահաստատուն, կարևոր հիմքի տարեդարձը, 1654 տարին: Այդ թվականը, այդ դեպքը, Էջմիածնի ստեղծումը կամ Քրիստոսի իջնելը հայ երկրի վրա, դա միֆ է, լեգենդա է, թե առասպել, իր խորունկ իմաստն ունի:

Հայ ժողովուրդը, ինչպես երգում էին հնում իմ մանկության ժամանակ, հաշվվում էր որպես Էջմիածնա ազգ: Էջմիածնա ազգ... Շատ խորունկ խորհուրդ կա դրա մեջ: Իհարկե առանց հայ ժողովրդի Էջմիածին չկա, առանց Էջմիածնի հայ ժողովուրդ չկա: Այնքան ժամանակ որ հայ ժողովուրդ կա, Էջմիածինը կա: Այնքան ժամանակ որ Էջմիածինը կա, հայ ժողովուրդը կա: Դա այդպիսի միակենտրոն երևույթ է: Շատ ենք խոսել ժամանակին, ամբողջ դարերով ու տարիներով, թե Էջմիածնի դերը ինչո՞ւմն է, ի՞նչ մեծ դեր է կատարել: Էջմիածինը, բոլորս էլ խոստովանում ենք, որ հայ պետականությունը կորցրած օրվանից մանավանդ, հայ պետության գործ է կատարել: Սա նոր խոսք չէ, շատ հին խոսք է: Էջմիածինը հոգևոր պետություն է կազմել, և՛ մոնղոլները, և՛ թուրքերը, որ ամեն բան կործանել են, ավերել են, եկել են Էջմիածնա պարսպի առաջ կանգ են առել:

Ռուս-պարսկական պատերազմների ժամանակ, ռուս-պարսկական պայմանագրի մեջ կետ կար, պայման կար, որ Էջմիածինը չոմբակոծեն:

Սիմվոլիկ կերպով կասենք, որ հայության սի՛րտը չոմբակոծվի:

Ես սիրում եմ Էջմիածինը և պաշտել եմ Էջմիածինը, և քանի ողջ եմ, նույնը իմ հոգու մեջ պիտի կատարվի, և ամեն մի հայրենասեր, ազգասեր մարդու սրտի մեջ, որովհետև Էջմիածնի սյուները չեն հանգչում միայն Էջմիածնի վանքի հաստաբետ քարերի վրա, այլ ամեն մի հայի սրտի մեջ են Էջմիածնա սյուները:

Իբրև ժողովրդի մեկ մասնիկը, ժողովուրդ, որն ասվում է «Էջմիածնա ազգ», մենք էլ՝ այդ ազգի որդիները, միշտ էլ պիտի կապված լինենք այդ ազգի հետ և պահենք ու պահպանենք նրան, որովհետև մեր ազգության գոյությունը ամենաուժեղ կերպով, կայուն և տևական կերպով նա է պաշտպանել: Ես կարծում եմ, այստեղ էլ պիտի վերջացնեմ իմ խոսքը: Շատ ուրախ ենք մենք, որ մեր Էջմիածնի անմիջական պետը, կառավարիչը, հովվապետը մի երիտասարդ մարդ է, եռանդով լիքը և մանավանդ հավատով լիքը: մենք կարող ենք հանգիստ լինել, որ մեր Էջմիածնա ղեկը գտնվում է ուժեղ և ազնիվ ձեռքերի մեջ:

Կեցցե Վեհափառը: